



ՆԱՅ


ՍԿԱՈՒՏ

ԿԻՍՍՄԱՆԵՍՅ ՕՐԿԱՆ Ն. Մ. Ը. Ս.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԿԱՈՒՏ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԿԱՈՒՏԻ ԿԵՆՏՐՈՆ, ՔԻ. 26, ՕԿՐԵՎՅԻ, Կ. ՊՈԼԻՍ
 (Téléph. St. N. 2146) H A I S C O U T (Հեռ. ՍՔ. 2146)
 ORGANE DES SCOUTS ARMÉNIENS
 ADRESSE. — Khorassanjian Han, 26, Sirkedji — CONS/PLE
 Քաղաքի Տարիկան 120 թթ.
 Արասանան 15 թթ.
 Անդրիկա 1.50 արդար

Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 5 ԶԱՏԸ 5 ԴՆԵ. 1 ՕԳՈՍՏՈՍ 1921



ՅՈՒՆԻՍԿՈՒՄ ԻՕԻ ՄԻՋՈՐԲԱՆՈՑԱՑԻՆ ՈՂԻՄՊԻՈՆԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐԷՆ

ՊԵՏԸ ԲԱՌԵԼԻ ԽՕՐԸ

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

ԲԱՆԱԿՈՒՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՏԻ ՍՌՆԵԼՈՒ ԿՈՐԵՒՈՐ ԿԷՏԵՐ:

Անցեալները տղանք մին ինձմէ կազմէր բա-

նակումի մասին մանրամասնութիւններ եւ կ'ըսէր:
 «Ո՞րն է ամենէն կարեւոր բանը երբ բանա-
 կելու կ'երթանք»:

Պատասխանեցի. — Երբ բանակելու կ'երթաք
 վերադարձած ասեմնիդ երկու բան պիտի է ձգիք
 ետեւնիդ:

Ա. ՈԶԻՆՉ. — Ամենէն կարեւոր բանը որ

պէսք է ընկէ երբ կը վերադառնաս. պէսք է'կ կենաց
որ եւ է աղետաբերին կաւ կշան հոն բանակած
ըրազնիդ ցուցնող:

Բ. ՁԵՐ ԵՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ: Ես
անգամներ շաւ բանակում մը ընկողմ հասնոյալի
օրեր անցնելէ վերջ, կը մոռնան շնորհակալ ըրազ
անոնց, որոնք բարի եղան հիւրասիրելու գիրենք:

Գիտէ՞ք ինչու համար շատ կարեւոր են այս
երկու պարագաները, որովհետեւ եթէ գործադրուին
ուրիշ առթիւ սիրայօժար կ'ընդունուի՞ք եւ նոյն
իսկ հրաւեր կ'ստանաք կրկին բանակելու նոյն տեղ:

Ուրիշ պատճառ մ'ալ, անոնք որոնք կը քերա-
նան այս պարտականութեանց մեջ ձեռնարկ Սկա-
տսներ չ'են կրնար նկատուիլ. Սկատսական օրակ-
ներէն մին քի՛ «Սկատսը փայտալար ե» կ'ստիպե-
ղինք որ շնորհակալութիւն յայտնէ բոլոր ազնու-
ութեանց համար, որ կը տեսնէ որ եւ է մեկի:

Կ'ուզեմ որ ամէն սկստս ձեզմէ այս կէտերը
նկատի առնէ եւ գործադրութեան ղեն: Ես հանդի-
պեցայ բարեկամներու որոնք կ'ըսէին «Մեր գիտը
եկող Սկատսներուն այս ինչ կաւ այնինչ բաները
ըրի եւ այնքան գոն եղայ որ կը ցուիմ քե ինչո՛ւ
աւելին չի կրցայ ընել»:

Ես ալ Սկատսներու շատերէն նամակներ ստա-
ցայ ամէնուն ալ պատասխանեցի, բայց միայն երեք
հաստէ շնորհակալութեան երկտող մը առի, մնաց-
եալները՝ իրենց պատասխանը ձեռք բերելէ վերջ
ամէն բան մոռցան: Ասիկայ կ'ըսեմ ոչ քե եւ
կ'սպասեմ շնորհակալութեան՝ բայց Սկատս մը
պէսք է գիտնայ ըսել, «Շնորհակալ եմ»:

ՃՇՄԱՐԻՑ ՍԿԱՆՈՒԹԻՒՆ
ԾԱՌ-ԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Նուէր Գում-Գարուի Մասնաճիւղին

Թե՛ն նոր շեղիմք հետեւեալ բարի ծառա-
յութիւնը, վստահ եմ որ ամէն Սկատս պիտի նե-
սաբրտուի, զայն շնորհով իբր հիսակալի օրինակ մը:

Օգնական սկստս խմբապէս մը, որ հարաւ,
Ափրիկէն զրկուած է ձեռնպարի հանդիսներուն,
Չ սարի առաջ իր երկու ոտերը կորսնցուցած է
շոգեկառքի վստակի մը պատճառով, հակառակ իր
այս փիզիկական պահասութեան ֆաշարար կը շա-
րունակի իր գործով ծառայութիւնը եւ վերջերը
կ'արժանանայ փոխ խմբապէսի աստիճանին:

Երբ կ'որոշուի Չ ներկայացուցիչ զրկել ձեռ-
պարի հանդիսներուն, խումբը կ'որոշէ մասնա-
ւոր հանգանակութեանը մը զրկել իրենց փոխ

խմբապէսը: Եւ այս առթիւ իրեն երկու մեխանակա-
նոսեր շինել կուսայ:

Թող սպրի՛ այս տեսակ խումբ մը:
ՊԷՏԸՆ ՌԱՌԵՂ

ԵՂԲՈՅՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Հ. Մ. Ը. Մ. Ի Գում-Գարուի Մասնաճիւ-
ղին սկստաներէն մին, առկէ առաջ թրամուէյի
արկածի մը հետեւ անցով իր ալ ոտքը կորսն-
ցուցած էր: Մասնաճիւղին սկստաները հան-
դէս մը սարքելով, հասոյթը, մօտաւորապէս
100 ոսկի, յատկացուցին անոր բժշկական դար-
մանու մին, ինչպէս նաև արուեստական ոտքի
մը շինութեան: Առաջինու թիւն է Գում-Գարուի
սկստաներուն այս օժանդակութիւնը:



ԻՏԷԱԼԻ ԱՆՆՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ (*)

Յաճախ կ'ըսեն, «Իտէալը, բարի փափաք-
ներով և գեղեցիկ ծրագրերով կեանքին բա-
ւարարութիւն չը տար»: Անշուշտ, ան չբաւեր,
բայց անհրաժեշտ է ան, սակայն ինչո՞ւ ներ-
կայիս նկատի չառնուիր:

Չը բաւեր միայն պատերազմի պատրաս-
տուիլ ալ պէտք է պատերազմի ժամանակ լա-
կուիլ: Թնդաւօթները ունէ օգտակարութիւն
չեն ունենար, եթէ կարող չենք զանոնք լեցը-
նել որպէս զի գործեն: Նմանապէս մեր սիրտն
ալ ունէ օգտակար գործ չարտադրեր եթէ չկրեր
լաւագոյն իտէալներ:

Մարդ, քսան տարեկան եղած ժամանակ
մտադրած բարիքներուն միայն մէկ մասը կ'ի-
րագործէ: Իսկ եթէ ունէ բարիք ընելու գաղա-
փարը չէ ունեցած վստահ եղէք որ անոր կեան-
քը իր անձին, իր ազգին, ու ամբողջ մարդ-
կութեան օգտակարութիւն չունենար: Երբ պա-
տանի մը կը խանդավառուի իր հօրը գեղեցիկ
ու օգտակար պատմութիւններովը, երբ անոր
սիրտը կ'զգածուի ու աչքերը կը թռչունին ազ-
գին համար զոհուող մեծ մարդիկներուն յիշա-
տակով, երբ նա կը մտադրէ իր նախնիքներուն
մաքուր ճամբուն հետեւիլ, երբ նա թռչուն մը
տեսնելով կը մտաւանջուի թէ ինչք ինչո՞ւ թեւեր
չունի օդին մէջ բաձրանալու համար, վստահ

(*) Մասնաւոր կերպով կը յանձնարարենք կարգաւ
այս գրութիւնը: Ծ. Ի.



ՊՈԼՍՈՅ ՀՕՅ ՍԵՆՈՒՑՆԵՐԸ ԳԱՅԻՇ ԶՈՂԸ ԱՐԵՍԻՒՄ ԲԻՋՈՅԻՆ

եղէք որ այդ պատանիին մէջ կը ծնի տպագայ հերոս մը:

Տղաք յաճախ շատ պարզ երազներ կ'ունենան: Անոնք ոչ ժամանակը և ոչ ալ կեանքի ուրիշ պայմանները նկատի կ'ունենան բայց կը հասնի օր մը, ուր այդ բոլորը իրականացած են:

«Ես մեծ նախարար մը պիտի ըլլամ» ըսաւ Օքսֆորտի համալսարանի սւսանողներէն մին, ընկերական պտոյտի մը ժամանակ և օր մը այդ ուսանողը՝ Տիդրայէլի, Անգլիոյ առաջին նախարարն էր:

Օ Գօնէլ, իր հայրենիքին ծովեզերքը թափառած ժամանակ, ալիքներուն ձայնին մէջ խառնուած լսեց Իրլանտացիներու լացն ու կոծը և ըսաւ: «Կ'ուզեմ հայրենիքս փրկել» նա յաջողեցաւ սարսաղեցնել Անգլիան ու փրկել Իրլանտան:

Այսպիսի օրինակներ խիստ շատ են ամէն ազգի պատմութեան ինչպէս նաև գիտական յառաջգիժութիւններուն մեծ շարքին մէջ: Աւազ որ մեր մէջ հազուադիւրս եղած են այդպիսի լուսագոյն երազներով սողորուողներ: Իսկ ներկայ սերունդը, կարծես ապրելէ ձանձրացած, սկեպտիկ և յուսահտ է: Զուգեր երազներ ունենալ և անոնց իրագործման աշխատիլ, գրազէտ մը ըսած է: «Ներկայ սերունդին աչքերուն մէջ բոց չկայ» Եթէ ճիշդ է, պատճառը

այն է որ նա զինքը լուսաւորող և ազնուացրնող իտէալներ չունի: Նա կարծես սկսելէ առաջ յուսալքուած, գործելէ առաջ յոգնած և կրուուելէ առաջ պարտուած է:

Ո՛չ, սիրելիներ, ունեցէք լուսագոյն երազներն ու իտէալը լուսաւորելու և արդիւնաւորելու համար ձեր երիտասարդութիւնը: Երազեցէք հայրենիքի համար զօհաբերութիւն ընել, և ճշմարտութեան յաղթանակին մասին յոյս ունեցէք: Ինչք ազգին յոյսի գարունն էք: Ձեր սիրտերուն մէջ սիրոյ և կենսունակութեան աւելը թող հոսի: Պարտականութեան առջև խանդավառուեցէք, Բողոքեցէք ընդհանուրին անտարբերութեան դէմ եթէ կ'ուզէք յաղթականի բաժակով բմպել կեանքի քաղցրութիւնը: Պղատն ըսած է «Երազեցէք ու երգեցէք այն մեծ գործերը զոր դուք ապագային պիտի վայելէք»: Ուրեմն սկսուաներ, ապրեցէք խաղաղօրէն ձեր ներկայ կեանքին մէջ, ունեցէք լուսագոյն իտէալներ և աշխատեցէք ամէն զօհաբերութեամբ այդ գեղեցիկ երազները իրականացնելու՝ բարձրացնելու համար ձեր անհատականութիւնը, օգտակար ըլլալու Ձեր Ազգին ու ամբողջ մարդկութեան:

Թաւգմ. 40-40



2. Մ. Ը. Մ. ի Սկանտական յանձնախումբի ատենապետ եւ թերթիս աշխատակից յայտնի մանկավարժ՝ Տիար Յովհ. Հինդլեանի հետեւեալ թարգմանութիւնը ջեր մօրէն կը յանձնարարենք կարդալ՝ ծնողքներու, որ բանոցներու վարիչներուն եւ մասնաւորապէս Ուսուցիչներու:

Ե. Խ.

ՍԿԱՆՏՈՒԹԵԱՆ ԴՍՍՏԻԱՐՈՎՉԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Նեոեւոգոս քեամբ DEAN RUSSELL ի

(Նիու Եօրթի Քոլլըմպիա Համալսարանի Բրօքհուտոն)

Աննախընթացօրէն փոքորկայից այն ժամանակներուն մէջ, ուր դարերու աւանդութիւնները կը փշրին եւ ֆաղափարքաբան իշխանները կը շարունակուին վրայ են, բոլոր ազգերու հայրենասիրները անձկանօք կը մտածեն թէ ներկայ քոն ու բոնիկ ընկերային ի՛նչ ճեսակ կարգ ու սարք դուրս պիտի ելնէ: Պատաստուիչ. ահա՛ բառը՝ որ բնականօրէն կը բոլորի առեւտրը, կը նշանակէ պատաստուիչ՝ զինու գործքանք ինքնապաշտպանութեան դիմելու համար օտար յարձակումի դեմ. իր բարձր առումովը, այդ պատաստութիւնը կը ցանկայ մարդկային բնատրութիւնը նորոգել, այնչէս որ անքանը որ կայ մարդուն մէջ սանձահարմար մնայ ընդ միջ: Գործածունելիք միջոցին մասին կարծիքները որքան աչ արթնիկ իրարմէ, առեւտրու աչ իղձը ալ ե որ խաղաղութիւն իրարմէ աշխարհիս վրայ եւ մարդիկ բարեացակամ ըլլան իրարու հանդէպ:

Մինչեւ որ մարդիկ իրարու հանդէպ բարեացակամ չըլլան՝ խաղաղութիւն չի կրնար իրենք, եւ բարի չի այն կամեր որ արդարութիւնը չի յարգեր, սեպհականութեան իրաւունք չընդունիր, կեանքի ապահովութեան, ազատութեան եւ երջանկութեան արգելք կ'ըլլայ:

Մեր հայրերը, մեր ազգին հիմնադիրները ժառանգ բողոքի մեզի՝ մեր հասկցած կերպով Աստուած պաշտելու իրաւունքը առաւուր ընելու, սեպհականութիւն դիմելու, հող գնելու եւ անոր բացարձակ տէր ըլլալու, մեր դրացիներուն հետ առեւտրեալ փոխանակութիւններ ընելու, մեր անձին տէր ըլլալու իրաւունքը:


Բայց մեկ դարէ աւելի ե որ կամաց կամաց ստրկացանք թէ իրաւունք ըստած բանին առիւնչունակ բան մը կայ՝ որ ե պատահականութիւն ըստածը թէ՛ սեպհականութեան իրաւունքը կը պատահարէ ուրիշներուն սեպհականութիւնը յարգելու պատաս-

կանութիւնը, թէ՛ ազատութեան իրաւունքը անբաժան ե օրեկօն հնազանդելու պատահականութեան. թէ՛ երջանկութիւն վայելելու իրաւունքը կը իրաւայե ուրիշները դժբաղտութեան գերծ պահելու պատահականութիւնը, եւ, մեկ բառով, թէ՛ կանաւարութեան կողմանէ երաշխաւորուած ֆաղափարքաբան իրաւունքները առեւտր ֆաղափարքի վրայ պատր կը դնեն ազգասիրական ծառայութիւն մասնացանկ էրք եւ ի՛նչ զինով որ պէտք ըլլայ:


Դաստիարակները որոնց զիստոր գործը ոչ թէ ուսում ջանքը այլ դաստիարակել է, առեւտր անուղղակի եւ յանելուածական միջոցներու կը դիմեն որպէս զի իրենց աշակերտներուն իշխանները ազնուազնեան եւ այս հիման վրայ անոր ունակութիւններով օժտեն զանոնք: Անոնք կ'ուզեն որ իրենց աշակերտները նախաձեռնելով ըլլան ի գրուի հանելու ու եւ ե աղէկ բան որուն ձեռնարկած են, աշխատութիւն ըլլայ թէ խաղ: Անոնք զիտեն թէ անձնապատաստութիւնը, ինքնապատաստութիւնը ուրիշ կերպով կարելի չի ձեռք բերել, եւ թէ կեանքին գեղեցկագոյն իշխաններուն վրայ ֆարգիչը անարթը կը թողու տղան. մինչեւ որ տղան ի՛նքն իսկ չի կերտ զանոնք իր նկարագրին մէջ:

Ահա այս նկատմամբ ե որ կը յայտարարենք թէ այդ-սկանտական ձեռնարկը մեր ժամանակի առեւտր ու յարմար կըրական ձեռնարկն է: Թող բնապատուր զայն զովք անոր համար որ այս ձեռնարկը տղան բնութեան ծոցին մէջ կը դնէ. քոնք բարոյախօսը ներքոյն զայն՝ իր բարոյագիտական մեծաշոք օրեկօններուն համար. քոնք առողջաբանը անոր դրուաքիքը այ՛ մարմնակերպական մեքոններուն համար. քոնք ծնողք յարգեն զայն՝ որովհետեւ տղան հետու կը կեցրեն շարիք. բայց դաստիարակին համար՝ այս ձեռնարկը իրաւայի կարողութիւնը ունի անհանդարտ, անպատաստանասու, անձնաւոր տղան՝ պարկեշտ, վատնելի, այլապէս պզտիկ ֆաղափարքի մը փոխելու: Այն տղան որ կ'ուզէ յարիչ այս ձեռնարկին, կը գտնէ անոր մէջ ինչ մը աշխատութիւններ որոնք խաղի երեւոյթ ունին, ընտիր գործեր՝ զորս կարող ե գնահատելու, կենցաղի կանոններ՝ որոնց պատրի հնազանդիչ. պատաստանաստութիւն իրաւորող դիրքեր զորս կարող ե գրուելու երբ ինքիցինքն առեւտր արձակ ցոյց այս անոնց. մեկ բառով, ծրագիր մը որ պատշաճ ե տղու մը բնագոյններուն, եւ մեքոն մը՝ որ պատշաճ ե տղու մը բնատրութեան:

Հոս տեղը չի լինելու Պոյ-Սկանտական ծրագիրը. բայց աշխարհիս առեւտր մեծ մանկավարժը պիտի համարէի ինքզինքն՝ երբ կարենայի յորիւնը դպրոցական ծրագիր մը որ նոյնիսկ ուղղակի



Խեղճ բեռնակիր որքան յոգնած է . . . Ախ, «Պոփ Կ օգնեչ» իրեն կերպով մը . . .



Մէկ կողմ զենք տատամտուք եւ զործի սկսինք, օն, մէկ երկու երեք . . . ամուր քաշէ որ բեռը վեր ելլէ եւ բեռնակիրը թող թեթևութիւն զգայ առանց գիտնալու թէ ով է իրեն օգնողը!!!

Մ. Աստուխան 1921

կերպով կարենար կոչում ընէր զոսն հեռաբերութիւններուն եւ այլնալն նպաստակարար կերպով պատշաճօր չափահասի պիտեմունքն: Սկսուածական անկէ գործ չափահասի մը գործն է մանչու հասակին վերածուած: Մրայիքը զոսն հեռաբերութիւններուն կոչում կ'ընէ ոչ նախաւառաջ անոր համար որ զոր մը սանմունուած է, այլ մասնատրայիս անոր համար որ զոսն կ'ուզէ կատարեալ մարդ ըլլալ: Այլն անցուցիկ ցանկը. հողագործութիւն եւ ձկնորսութիւն, երկաթագործութիւն եւ անասնոր, հիւանութիւն եւ օրկնագիտութիւն, կարևագործութիւն եւ հանկագործութիւն, երաժշտու-

թիւն եւ կապարագործութիւն, հաւաքածութիւն եւ նկարչութիւն, անվիշակական օգնութիւն եւ քաղաքապարտութիւն, ազատարարութիւն եւ ուսումն բնութեան, նաւորդութիւն եւ արուեստ բանակուծի, հայրենասիրութիւն եւ խոհարարութիւն, եւ խեղ մը ուրիշ գործունեութիւններ որոնք կը պահանջեն որոշ գիտութիւն՝ ուղղակի կիրարկելի արտեայ կեանքի մէջ: Այս գործերուն անկէ մեկին զոսն կը հրապուրուի, ոչ միայն անոր համար որ զոսն է եւ կը սիրէ զանոնք ընէր, այլ նաեւ անոր համար որ անոնք այնպիսի գործեր են զորս կատարեալ մարդիկ օգտակար կը զսեն: Միեւնոցն պատճառաւ

ե որ սկսուտ-պոյր արդարը կը պաշտպանէ անար-
դարիւն դէմ, ճշմարիտք՝ սուսիւն դէմ, կ'օգնէ սկարիւն
եւ կռիւնայիւն, եւ կը սիրէ ու կը փնտռէ կեանքի
շաւազոյն բաները: Սկսուտական երդումը կը պա-
րունակի այս ասկեր:

Սկսուտութիւնը նպաստակ չունի դպրոցիւն
տեղը բռնելու: Անոր նպաստակն է դպրոցներուն
վերացական հրահանգումիւն բողոք պակասը չեցը-
նէ՜ նոր մարզերու մէջ փոխադրելով ճղան եւ
առիթներ սաշով անոր գործածելու ինսպակաւ,
բարոյական եւ ֆիզիքական բոլոր իր կարողու-
թիւնները: Անոր առաւելութիւնը ան է որ արտա-
կարգ պահպանութիւն մը ունի, ասկէ աստիճանէ
մտային կարողութիւններու եւ ընկերային ասկէ
դասակարգերու կը պատշաճի, եւ անոնց ասկերուն
համար իրական պիտի մը կ'ստեղծէ իրենց կրցածը
ընկերու:

(մտացեալը յաջորդով)

Յ. Թ. Է.



ԳԻՏՈՒԿԱՆ ՆՕԹԵՐ

Մարդկութիւնը իր զարգացումը հետաքրքրութեան
կը պարտի՝ եթէ ըսենք շատ ալ չափազանցութիւն ը-
րած չենք ըլլար. Դիտող աչքերն ու դատող միտքերն
են սակայն որոնք բարձրացած են միջակութիւններէ ու
իրենց անունը քանդակած դարերու բազարակրթութեան
ճակտին:

Երկու աշխարհ կայ մեր առջեւ որ անձանօթ է մե
զի կամ շատ քիչեր մեզմէ կը զբաղին անոնցմով, ան-
հունօրէն փորրերու աշխարհը եւ անհունօրէն մեծերու
աշխարհը. Այս աշխարհները իրենց մասնաւոր գիտու-
թիւնները ունին, առաջինը քիմագիտութիւնը կամ ման-
րէաբանութիւնը իսկ երկրորդը՝ տիեզերագրութիւնը:

Այս երկու աշխարհէն ալ ծանօթութիւններ պէտք
են անշուշտ սկսուտի մը որ բարձրանալու եւ բարձրա-
ցնելու նշանաբանը ունի իր սրտին մէջ:

Ես պիտի ջանամ ծանօթութիւններ տալ երբեմն այս
երկու աշխարհներէն, իմ գիտցածէս եւ չգիտցածս ալ
հաւարելով իւրաքայիւրի մատչելի չեղող գրքերէ եւ օ-
տար հանգէսներէ:

Իմ յօդուածներուս շարքը պիտի կազմեն ամփոփ
ծանօթութիւններ երկիրէն, երկրէն ու երբեմն ալ ման-
րէններու աշխարհէն:

1. Դիտուտ առաջեր

Երկնային երկու երեւոյթներ կան որոնք՝ իրենց տա-
րօրինակ առասպելներովը հասած են մեզի: Մինչեւ այ-
սօր, շատ մը տեղեր, զէնքի պայթիւնով կը զիմաւորեն
Լուսնի խաւարումը, կարծելով որ այդպէսով պիտի վախ-
ցրեն լուսնի առջեւը կեցող սատանան:

Շատեր կան որոնք աշխարհի կործանումը կը
տեսնեն գիսաւոր աստղի մը երեւումին մէջ. Այսպէս
երբ այդ աստղը երեւայ անոնք կը սպասեն անոր երկ-

րի զարնուելուն որուն զոհ պիտի երթայ ամէն բան
մարդ անասուն եւ յն:

Կրնայ ըլլալ որ մեր սկսուտ եղբայրներէն եւս պա-
տեհութիւն ունենան այդպիսի վախի վայրկեաններ ապ-
ապրելու: Մենք այնպիսիներուն պիտի ըսենք թէ երբեք
վախնալիք բան չիկայ, անոնք ալ մոլորակներ են միտնե-
րուն նման մի քանի տարբեր յատկութիւններով միայն
տարբեր անոնցմէ:

Ահա մի քանի ամփոփ ծանօթութիւններ անոնց վրայ.
Դիտաւոր կը կոչուին այն միգամածային (կազային
վիճակի մէջ) աստղերը կամ նոյն իսկ մոլորակները ո-
րոնք կը գառնան արեւու շուրջը եւ միւս մոլորակնե-
րէն կը տարբերին իրենց ձեւով, շարժումով եւ բազա-
ղութիւնով:

Անոնք թափառական մոլորակներ են.
Երեք գիտաւոր մասերէ կը բաղկանայ ան.

- 1. Գորիզը որ ամէնէն լուսաւոր մասն է գլխուն կող-
մը.
- 2. Վարքը՝ որ լուսապակ մը կը կազմէ կորիզին
շուրջը եւ՝
- 3. Պոչը որ ասոնց ետեւէն երկարող ճերմա-
կութիւնն է եւ փայլ անգամ չունի:

Սակայն միշտ այսպէս ամբողջ չեբեւար ան. Առա-
ջին անգամ, երբ դեռ արեւէն հեռու է, միայն կորիզը
կ'երեւայ իր վարքով, որքան մտնեայ արեւուն կամաց
կամաց կ'սկսի երեւալ նաեւ պոչը. Անոր պատճառը կը
բացատրուի իր ձուածիրին զիրքովը. Սակայն անոր բա-
ցատրութիւնը մատչելի չըլլալով մեծամասնութեան՝ չեմ
ուզեր հոս գրել այդ մասին. Միայն ըսեմ որ անոնք երկու
խումբի կը բաժնուին, 1. Անոնք որ մէկ մէկ անգամ
միայն կ'երեւին եւ կ'անհետին անվերջ եւ՝ 2. Անոնք որ
որոշ շրջաններ ունին մեզի տեսնելի ըլլալու համար:

Այս երկրորդ տեսակէն 18 հատ զիտուած են մին-
չեւ հիմա որոնց ամէնէն գիտաւոր երեք հատը կը զը-
նենք հոս:

Enckeի գիտաւորը որ 3 տարի 30 օր շրջանով կ'ե-
րեւի միշտ, Bielaի գիտաւորը որուն շրջանն է 6 տարի
69 օր. Halleyի մեծն է Halleyի գիտաւորը որ ամէնէն
զեղեցիկն է եւ 75 տարին անգամ մը կ'երեւայ, 1910ին
երեւցաւ այս գիտաւորը ուրեմն յաջորդ երեւումը պիտի
հանդիպի 1985ին, 64 տարի վերջ եկողները թող մտածեն:

Այս գիտաւորները ամբողջն ալ հրաշքի կազմի վիճա-
կի մէջ կը գտնուին, ուրեմն կազմուելու վրայ եղող աշ-
խարհներ են, որոնց մէջէն կ'երեւան աւելի զօրաւոր լոյս
ունեցող աստղերը:

Մինչեւ վեց պոչ ունեցող գիտաւորներ զիտուած են,
Մեծութեան վրայ գաղափար մը տալու համար բսենք
որ 1843ին երեւցող գիտաւոր աստղը 60 միլիոն փարսախ
երկայնութիւն ունէր:

Գիտութեան այս իրողութիւններուն ծանօթանալով
պիտի հիանանք անոնց՝ փոխանակ վախնալու, տեսնելով
որ անոնք հրաշալիքներ են զիրենք ստեղծողին:

Դիտաւորներու մասին այսքանով պիտի զոհանամ
այն համազումով որ աւելին կը պատկանի մասնագիտա-
կանին:

Պ. ՀՆԻՄՈՒԿԱՆ

2/II Խուճրակն Վարմիր Խայչի սկսուտ





ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒՆ

Գ. Գ Ա Ս Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

Ա Ր Շ Ա Կ Ն Յ Ե Ր

Արշաւը տղաքը ս'խառտ պատրաստելու ամենագործնական միջոցներէն մին է: Արշաւի պահուն տղաքը կը վարժուին, յոգնութեան, համբերութեան, ճարպիկութեան իրերօգնութեան և հնարամտութեան: Արշաւները պէտք չէ ըլլան պարզ պտոյաներ այլ անոնց միջոցին խմբապետը պէտք է ջանայ կարելի եղածին չափ շատ գործնական կերպով կատարել տայ սկառտական ինչ ինչ ծանօթութիւնները:

Արշաւի զանազան ձեւեր կան որոնք իրենց նպատակով կը տարբերին իրարմէ: Ասոնցմէ կարելի է յիշել հետեւեալները:

1. — Արկածախնդրական արշաւ. — Որու միջոցին սկառտաները երկերկու հոգինոց խումբերու կը բաժնուին և զանազան ուղղութեամբ ճամբայ կ'ելլեն արկածախնդրութեան համար: Երկու ժամ յետոյ կը վերադառնան և ամէն խումբ կը պատմէ այդ երկու ժամուան միջոցին իր ունեցած արկածները: Խմբապետը կ'որոշէ թէ ո՞րն է լաւագոյնը:

2. — Բարեգործական արշաւ. — Որու միջոցին սկառտաները դարձեալ պիտի ցրուին և ամէն ոք պիտի ջանայ որոշեալ ժամանակի մը մէջ բարի գործ մը կատարել, հոգ չէ թէ որքան չնչին ըլլայ ան:

3. — Բնագիտական արշաւ. — Սոյն արշաւներու միջոցին խմբապետը պէտք է ծանօթութիւններ տայ սկառտաներուն ճամբան հանդիպած բոյսերու և կենդանիներու վրայ:

4. — Ընկերական արշաւ. — Որոնք կը կատարուին ծնողքներու մասնակցութեամբ, լաւ միջոց մըն է ծնողքներուն ծանօթացնելու իրենց զաւակներուն սկառտական կեանքին հետ:

5. — Ենկուրեանց արշաւ. — Որու միջոցին սկառտաները պէտք է ունենան կառուցանեն զոր օրինակ կամուրջ, սանդուղ, խրճիթ ելն:

6. — Խաղերու արշաւ. — Որու միջոցին սկառտաները զանազան խաղեր կը խաղան:

7. — Գիշերային արշաւ. — Արշաւներու մէջ ամէնէն աւելի օգտակար ըլլալու կոչուածն է այս: Գիշերային արշաւներու համար կարելի է միացնել բոլոր միւս արշաւներու յայտագրերը: Ասոնցմէ դուրս խմբապետը պարտի գործնական կերպով սովորեցնել հետախուզութիւն, վրանի կանգնում, դրօշապարզում, կերակուրի պատրաստութիւն, կողմնացուցում, արկածեալի օգնութիւն, դրօշախօսութիւն, պահակներու կազմակերպութիւն և այլն:

Խմբապետ մը պէտք է գիտնայ որ տղոց մտքին մէջ շատ աւելի լաւ կը տպաւորուին արշաւի մը միջոցին իր անձամբ կատարածները, քան թէ բազմաթիւ դասախօսութեանց միջոցին տեսականօրէն իր սովորածները:

(Շարունակելի) **Գ ԺՊՅՈՒՆԻ**



ՈՒՂՏԸ

Անապատը անրնակելի պիտի դառնար, և զայն լքել հարկ պիտի ըլլար, եթէ բնութիւնը անոր շնորհած չ'ըլլար այնքան սովուն և այնքան ստիպապէտ խառնուածքով անասուն մը՝ Ուղտը, այնքան հողը ապերախտ է ու ախուր: Ոչ մէկ կենդանի իր կլիմային այնքան ակներև և այնքան բացառիկ յարմարութիւն մը կը ներկայացնէ. — պէտք էր ըսել որ նախախնամութիւնը հաճած է մէկուն յառկութիւնները համաձայնեցնել միւսին յատկութիւններուն հետ: Բնութիւնը ուղեկով որ ուղտը բնակի երկիրի մը մէջ ուր քիչ մնունդ միայն պիտի կրնար գտնել, նիւթը խնայած է անոր ամբողջ յօրինուածքին մէջ: Բնութիւնը անոր չ'է տուած եզին, ձիին և փիղին՝ ձեւերուն լեցունութիւնը. սակայն էն անձուկ պէտքին մէջ սահմանափակելով անոր վրայ տեղաւորած է մսազուրկ երկայն պարանոցի մը ծայրը անականջ գլուխ մը: Սրունքներէն և ազգրերէն է անոնց շարժողութեան անօգուտ բոլոր դնդերները. վերջապէս անոր գօս մարմինին՝ բնութիւնը շնորհած է միայն կմախքին յարակցելի անհրաժեշտ խողովակները և նետադախտը (tendon): Ու զայն օժտած է էն կարծր կերակուրները փշրելու զօրաւոր դունջով մը. բայց որպէս զի շատ ուտելիք չպատէ, անոր ստախօքը նեղուցած է, և զայն որոճալու հարկադրած: Ոտքը պարարած է մսակոյտով մը, որ տիղմին վրայ սահելով, և մագլցե-